



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի երրորդ եռամսյակում (վերլուծություն)

2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 48527 գործարք, որոնց քանակը 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 14.0 %-ով, իսկ 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 12.0 %-ով:

2017 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13667 օտարման գործարքի 74.7 %-ը կազմել է առուվաճառքը, 25.0 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.2 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.3 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի երրորդ եռամսյակում, 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 12.5 %-ով, իսկ 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 9.9 %-ով:

2017 թվականի երրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.0 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի երրորդ եռամսյակում, 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 11.7 %-ով, իսկ 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 16.5 %-ով:

2017 թվականի երրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երրորդ եռամսյակ 2016 թ.	Երրորդ եռամսյակ 2017 թ.	Երկրորդ եռամսյակ 2017 թ.
Կենտրոն	428250	452800	442800
Արաբկիր	357350	342800	337000
Քանաքեռ-Զեյթուն	283150	267300	268700
Նոր Նորք	254300	229600	233300
Ավան	261800	247500	250200
Էրեբունի	252350	236300	238000
Շենգավիթ	257700	240300	240000
Դավթաշեն	276800	251200	250100
Աջափնյակ	251100	226500	231500
Մալաթիա-Սեբաստիա	244200	230400	230000
Նուբարաշեն	157450	156000	156000
Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)	274950	261900	261600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.1 %-ով:

2017 թվականի երրորդ եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 1184 բնակարան, որի քանակը, 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 32.4 %-ով, իսկ 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 18.6 %-ով:

2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)
--------	----------	--------------------

		Երրորդ եռամսյակ 2016 թ.	Երրորդ եռամսյակ 2017 թ.	Երկրորդ եռամսյակ 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	116050	105000	106700
	Ապարան	58500	59000	58900
	Թալին	66850	62000	62400
Արարատ	Արտաշատ	98900	91300	92000
	Մասիս	115800	99900	102700
	Վեդի	101750	90500	90000
	Արարատ	77550	77900	77850
Արմավիր	Վաղարշապատ	154200	122300	132300
	Արմավիր	121250	92300	103350
	Մեծամոր	87600	70000	78000
Գեղարքունիք	Սևան	99400	79400	81800
	Գավառ	60600	52000	53700
	Մարտունի	107700	108300	106700
	Վարդենիս	45300	46100	45900
	Ճամբարակ	28800	28800	28800
Լոռի	Վանաձոր	88600	81000	84700
	Ստեփանավան	74750	66700	69300
	Սպիտակ	99850	88600	92300
	Ալավերդի	55900	49200	49700
	Տաշիր	47400	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	30000	23700
Կոտայք	Աբովյան	155150	149500	148400
	Նոր Հաճն	128550	119300	120000
	Բյուրեղավան	108250	92300	94400
	Եղվարդ	109900	106500	103600
	Հրազդան	63900	56000	57300
	Ծաղկաձոր	292400	288000	289500
	Զարենցավան	85500	73000	75300
Շիրակ	Գյումրի	109450	87700	93800
	Արթիկ	67400	67600	67600
	Մարալիկ	41100	42300	41500
Սյունիք	Գորիս	123850	124700	124200
	Կապան	95300	96000	95700
	Սիսիան	92200	89300	89700
	Մեղրի	83200	90000	86900
	Քաջարան	94950	98800	97400
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95100	92000	92300
	Եղեգնաձոր	126300	120800	121500
	Ջերմուկ	113300	99000	102700
Տավուշ	Դիլիջան	115600	110800	107000
	Իջևան	118550	110600	111800
	Բերդ	60450	62000	61100
	Նոյեմբերյան	50400	51000	50700
	Այրում	31900	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2017 թվականի երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի

հաշվարկով, շուկայական միջին գները, 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 1.1 %-ով:

2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 1570 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 441 գործարք, մարզերում՝ 1129 գործարք: 2017 թվականի երրորդ եռամսյակում, 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 56.1 %-ով, ընդ որում, Երևանում՝ 37.0 %-ով, մարզերում՝ 65.1 %-ով, իսկ 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 44.4 %-ով, ընդ որում, Երևանում՝ 34.5 %-ով, իսկ մարզերում՝ 48.7 %-ով:

2017 թվականի երրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երրորդ եռամսյակ 2016 թ.	Երրորդ եռամսյակ 2017 թ.	Երկրորդ եռամսյակ 2017 թ.
Կենտրոն	476350	476000	476000
Արաբկիր	383200	380000	380000
Քանաքեռ-Զեյթուն	295000	283100	283700
Նորք-Մարաշ	319300	300200	300000
Ավան	270600	262100	262300
Էրեբունի	239750	243100	234500
Շենգավիթ	255000	230000	230000
Դավթաշեն	276100	268400	268700
Աջափնյակ	250100	240000	241700
Մալաթիա-Սեբաստիա	238100	243000	234700
Նուբարաշեն	150800	150000	150000
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286800	279600	278300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի երրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 0.5 %-ով:

2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Երրորդ եռամսյակ 2016 թ.	Երրորդ եռամսյակ 2017 թ.	Երկրորդ եռամսյակ 2017 թ.

Արագածոտն	Աշտարակ	136250	130000	132000
	Ապարան	60050	51000	53700
	Թալին	69250	66000	66600
Արարատ	Արտաշատ	100100	97000	97400
	Մասիս	115100	110100	110800
	Վեդի	102300	90600	90600
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153150	149000	150100
	Արմավիր	107000	99950	102000
Գեղարքունիք	Սևան	94950	92950	92950
	Գավառ	57100	54100	54100
	Մարտունի	96200	95000	95100
	Վարդենիս	41150	41150	41150
	Ճամբարակ	31100	32000	31400
Լոռի	Վանաձոր	100900	98600	99500
	Ստեփանավան	91200	82800	85300
	Սպիտակ	114050	108000	109400
	Ալավերդի	50300	50500	50400
	Տաշիր	51900	45000	45300
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157350	155200	155900
	Նոր Հաճն	129800	126000	126000
	Բյուրեղավան	120500	110000	110300
	Եղվարդ	116100	109000	109700
	Հրազդան	82600	71000	72000
	Ծաղկաձոր	305000	300000	300300
	Չարենցավան	83000	80000	80000
Շիրակ	Գյումրի	119300	116000	117500
	Արթիկ	63450	60400	60400
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130050	128000	128700
	Կապան	100750	100900	100650
	Սիսիան	96500	95600	95500
	Մեղրի	84650	88500	85300
	Դաստակերտ	11610	11810	11810
Վայոց ձոր	Վայք	90150	88100	88200
	Եղեգնաձոր	116750	114000	114300
	Զերնուկ	131300	129000	129300
Տավուշ	Դիլիջան	115700	115000	113200
	Իջևան	123250	120200	120500
	Բերդ	60100	57000	57000
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 0.3 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել է 4279 միավոր (3806.13 հա) հող, որից Երևանում՝ 295

միավոր (206.94 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 2313 միավոր (3442.56 հա), որից Երևանում՝ 45 միավոր (13.13 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 1382 միավոր (113.39 հա), որից Երևանում՝ 123 միավոր (5.73 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 452 միավոր (34.53 հա), որից Երևանում՝ 111 միավոր (15.30 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 80 միավոր (199.56 հա), որից Երևանում՝ 15 միավոր (172.69 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 22 միավոր (3.65 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 28 միավոր (12.26 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.09 հա),
- ջրային հող՝ 2 միավոր (0.18 հա):

2017 թվականի երրորդ եռամսյակում օտարված հողերից 3503 միավորի (3212.81 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 237 միավոր (35.98 հա), նվիրատվության գործարք՝ 753 միավոր (586.83 հա), որից Երևանում՝ 57 միավոր (170.95 հա) և փոխանակության գործարք՝ 23 միավոր (6.50 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.01 հա):

Հանրապետությունում 2017 թվականի երրորդ եռամսյակում, 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 1.8 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 3.2 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 12.5 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 26.3 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1746.30 հա, որից 1725.85 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 26.2 %-ը կամ 918 միավորը (663.17 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 65 միավոր (1.78 հա), իսկ 72.6 %-ը կամ 2544 միավորը (2547.30 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 169 միավոր (33.95 հա): 2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 41 գործարք /2.34 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարք:

Ստորև ներկայացված է 2017 թվականի երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակ. կառուցապ. հողեր						բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակ. կառուցապ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	0	0.00	1	0.10	20	0.70	44	0.98	27	7.91	10	9.38	74	3.73	57	12.84
Արագածոտն	81	216.88	8	0.32	16	0.76	19	1.08	294	202.35	1	0.005	86	10.85	3	0.39
Արարատ	32	66.48	3	0.54	25	1.60	20	0.32	198	103.59	3	0.44	133	11.67	24	0.75
Արմավիր	12	92.60	4	2.63	4	0.08	7	0.07	219	1633.25	2	0.61	170	16.51	10	0.37
Գեղարքունիք	26	38.89	6	1.29	28	2.27	22	3.34	132	74.62	4	0.11	29	2.71	7	0.24
Լոռի	12	2.80	5	0.48	21	0.23	42	1.29	107	74.62	1	0.15	19	1.77	9	0.31
Կոտայք	92	120.70	7	0.54	152	12.17	39	1.92	374	152.10	2	1.03	193	15.71	26	2.08
Շիրակ	7	17.74	3	13.96	13	0.90	22	1.00	104	101.05	0	0.00	21	1.75	2	0.03
Սյունիք	4	3.68	4	1.09	13	0.04	2	0.09	44	61.55	2	1.27	25	1.95	5	0.10
Վայոց ձոր	28	35.70	1	0.02	6	0.47	4	0.31	24	21.32	0	0.00	14	0.71	7	0.08
Տավուշ	8	5.43	5	1.22	12	0.65	12	0.11	45	13.96	0	0.00	29	2.65	5	0.22
Ընդամենը	302	600.90	47	22.19	310	19.87	233	10.51	1568	2446.32	25	13.00	793	70.01	155	17.41

Ստորև ներկայացված է 2017 թվականի երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	
Երևան	38	0.89	1	0.10	15	0.13	22	0.66	27	0.88	0	0.00	0	0.00	5	0.56	22	0.32
Արագածոտն	2	0.054	1	0.05	0	0.00	1	0.004	122	218.99	81	216.88	7	0.27	16	0.76	18	1.08
Արարատ	7	0.26	1	0.02	3	0.10	3	0.14	66	46.86	25	44.66	2	0.52	22	1.49	17	0.19
Արմավիր	4	0.011	0	0.00	3	0.01	1	0.001	23	95.37	12	92.60	4	2.63	1	0.07	6	0.07
Գեղարքունիք	11	0.18	1	0.01	7	0.15	3	0.02	70	43.09	25	36.37	5	1.28	21	2.12	19	3.32
Լոռի	23	0.23	0	0.00	11	0.19	12	0.04	57	4.56	12	2.80	5	0.48	10	0.04	30	1.24
Կոտայք	23	0.67	0	0.00	16	0.63	7	0.04	264	129.07	89	115.11	7	0.54	136	11.54	32	1.88
Շիրակ	8	0.90	1	0.70	1	0.01	6	0.19	37	32.70	7	17.74	2	13.26	12	0.89	16	0.81
Սյունիք	11	0.023	0	0.00	10	0.02	1	0.003	12	4.88	4	3.68	4	1.09	3	0.02	1	0.09
Վայոց ձոր	3	0.141	0	0.00	1	0.001	2	0.14	36	36.36	28	35.70	1	0.02	5	0.47	2	0.17
Տավուշ	9	0.27	0	0.00	5	0.24	4	0.03	27	7.12	7	5.40	5	1.22	7	0.41	8	0.09
Ընդամենը	139	3.63	5	0.88	72	1.48	62	1.27	741	619.88	290	570.94	42	21.31	238	18.37	171	9.26

2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 12 գործարք (29.96 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի երրորդ եռամսյակում, 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 20.9 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 12.5 %-ով, իսկ մարզերում՝ 21.3 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 3.0 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ աճել է 59.7 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 18.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 31.3 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի երրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մուսավելագույն	Միջին			Նվազագույն	Մուսավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	62	91.98	50.4	890.2	286.2	220	132.12	365.0	12000.0	3375.1
Ապարան	2	6.90	66.9	386.4	226.7	7	10.75	86.5	2727.3	649.0
Թալին	15	117.98	37.6	308.0	103.9	44	24.76	93.6	5494.5	673.0
Ծաղկահովիտ	2	0.03	2353.0	2420.0	2386.5	14	33.66	79.5	1000.0	438.2
Արարատի մարզ										
Արտաշատ	9	24.55	149.6	2520.0	405.9	86	42.01	335.1	10833.3	2692.2
Մասիս	2	5.79	63.6	97.2	80.4	41	16.33	200.0	11904.8	3395.9
Վեդի	14	14.32	68.4	9121.3	4384.0	67	44.26	207.0	10795.1	1984.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	7	23.74	61.2	238.4	91.7	94	50.92	294.3	9090.0	1501.0
Բաղրամյան	1	0.94	224.1	224.1	224.1	39	1502.43	90.6	2561.1	799.5
Վաղարշապատ	4	67.92	33.8	35.7	35.0	78	46.92	444.4	11764.7	2076.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	0.36	191.6	191.6	191.6	15	7.59	199.8	1875.0	534.2
Ճամբարակ	9	3.35	287.6	1800.0	810.1	6	1.31	60.5	953.3	347.0
Մարտունի	6	22.96	121.2	1591.0	532.2	1	0.03	51.1	2850.0	735.0
Սևան	3	1.49	172.5	838.4	399.5	96	38.75	52.2	2134.8	365.0
Վարդենիս	6	8.20	1174.6	1750.0	1403.5	14	26.95	41.2	2575.1	357.6
Լոռու մարզ										
Ալավերդի	4	0.54	2445.9	2503.2	2468.4	15	9.76	170.4	6424.2	535.7
Գուգարք	5	1.33	418.0	1606.3	1310.5	23	4.37	234.6	6065.9	805.6
Սպիտակ						3	1.65	250.0	5555.5	651.7
Ստեփանավան	3	0.93	167.8	1455.4	917.9	35	31.25	90.6	1686.6	433.4
Տաշիր						30	27.39	45.3	1384.4	185.9
Կոտայքի մարզ										
Աբովյան	39	50.81	93.8	5783.3	574.8	187	47.42	279.3	11942.7	3906.1
Եղվարդ	43	58.76	67.5	4722.6	618.2	165	95.64	174.4	11971.8	2527.0
Հրազդան	7	5.54	95.5	647.5	296.0	18	8.22	130.5	10256.4	1119.8
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	0.65	307.6	307.6	307.6	23	22.67	252.0	1693.1	714.1
Ամասիա						10	20.10	40.9	261.0	145.0
Անի	2	1.12	88.1	305.3	196.7	19	20.84	110.6	546.9	467.6
Աշոցք						9	8.15	58.5	215.8	142.7

Արթիկ	4	15.98	125.5	507.5	374.7	28	27.50	79.4	1428.6	553.7
Սյունիքի մարզ										
Գորիս						13	16.65	92.6	1023.2	680.0
Կապան						6	8.56	120.0	841.6	464.2
Մեղրի	2	0.45	1150.0	1150.0	1150.0	4	10.64	193.0	3000.0	860.0
Սիսիան	2	3.23	131.3	236.5	183.9	21	25.70	46.3	1977.4	513.3
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	18	14.00	65.6	944.4	186.3	9	12.93	125.0	10000.0	1876.7
Վայք	10	21.71	33.8	201.3	88.2	15	8.38	58.8	1430.7	650.0
Տավուշի մարզ										
Բերդ						28	5.50	213.3	3783.8	731.2
Իջևան	7	5.40	131.0	1050.0	399.8	3	0.71	267.5	9454.5	1655.0
Նոյեմբերյան						11	7.50	46.7	7368.4	1064.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2017 թվականի երրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	5	2495.2	137.5	4996.2	3134.1	65	63188.7	130.7	22200.0	2587.7
Ապարան	6	3384.8	256.0	3333.3	2015.1	10	11406.0	124.1	609.6	391.4
Թային	1	485.0	235.0	235.0	235.0	8	15933.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ	4	1255.5	222.0	236.3	231.9	2	16574.0	60.0	214.3	95.0
Արարատի մարզ										
Արտաշատ	10	10663.7	531.3	540.0	536.6	35	35476.0	173.9	7140.3	902.3
Մասիս	9	4184.6	854.7	3703.5	2356.3	60	45069.0	187.5	25000.0	1204.2
Վեդի	3	99.8	1700.0	2500.0	2093.5	35	33686.9	126.1	5000.0	663.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						42	46784.8	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						3	3000.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	1	680.0	1367.6	1367.6	1367.6	122	111821.0	197.4	26528.4	1530.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						8	7154.0	186.6	1084.3	682.9
Ճամբարակ	1	1523.6	102.4	102.4	102.4	4	1194.0	71.3	2286.2	147.0
Մարտունի	14	16301.0	198.0	376.8	288.4	10	9881.0	119.3	5000.0	277.0
Սևան	2	1030.0	241.8	1273.2	757.5	2	1188.6	240.0	3110.4	350.0
Վարդենիս	4	2322.3	79.2	1470.0	716.4	4	6915.0	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի						8	9176.0	114.3	1388.9	216.7
Գուգարք	10	356.2	2105.7	3234.0	2216.0	6	4767.0	77.9	14083.3	1258.5
Սափտակ						2	990.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան						3	2796.0	88.2	1666.7	176.0
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	49	28125.6	576.7	9800.0	2475.1	105	83466.3	264.5	35353.5	1958.6

Եղվարդ	80	84561.1	210.8	4729.3	725.9	76	61944.7	173.6	27000.0	2855.1
Հրազդան	7	2750.8	1366.0	3333.3	2946.4	12	11678.6	117.7	34848.5	1317.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	6	848.5	580.8	1516.5	1008.8	15	9768.3	113.6	18750.0	333.5
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						3	6321.0	67.9	180.6	217.7
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	6	8014.5	122.5	2752.3	1053.5	2	1150.0	111.8	5000.0	216.9
Սյունիքի մարզ										
Գորիս						7	6690.0	112.2	1700.0	367.3
Կապան	2	110.2	2500.0	3200.0	2850.0	2	1520.0	67.9	2638.9	384.2
Մեղրի	1	76.5	840.0	840.0	840.0	3	2030.0	68.5	632.9	269.7
Սիսիան						12	8671.0	123.5	875.0	264.3
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	4657.8	59.5	755.0	194.0	12	6762.0	96.7	7659.6	506.0
Վայք						2	338.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						5	2859.3	75.8	810.0	131.0
Իջևան	5	3792.8	48.9	3000.0	1973.9	21	20944.8	74.1	14423.1	470.0
Նոյեմբերյան	2	352.8	230.5	245.9	238.2	1	1100.0	125.0	1948.1	259.0

2017 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2256 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.6 %-ը:

2017 թվականի երրորդ եռամսյակում, 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 10.3 %-ով, իսկ 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 21.8 %-ով:

2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 70 բնակարանի, 55 անհատական բնակելի տան, 807 հասարակական նշանակության, 476 արտադրական նշանակության օբյեկտի, 830 միավոր հողի, 2 այգետնակ և 16 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի երրորդ եռամսյակում Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 10 վարձակալության գործարքի քանակը 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 28.6 %-ով, իսկ 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 41.2 %-ով:

2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 9627.63 հա հողից 1.46 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 9626.17 հա հողից 9476.95 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 65.21 հա արդյունաբերական օբյեկտի, 23.22 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 7945.73 հա, որից 7902.97 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5920 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.2 %-ը: Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 2.2 %-ով, իսկ 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ աճել 18.6 %-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել

են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.8 %), անհատական բնակելի տների (23.6 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.4 %) և հողերի (6.6 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3485 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 4.9 %-ով, իսկ 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ աճել 22.8 %-ով:

2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 1078.37 հա հող, որից 15.04 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 96.4 %-ը կամ 1039.76 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 2.01 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Վայոց ձորի մարզում՝ 641.16 հա, որից 640.21 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 988 գործարք, որից 783-ը՝ Երևանում: 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 71.5 %-ով, ընդ որում Երևանում՝ 72.1 %-ով, մարզերում՝ 69.4 %-ով, իսկ 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ աճել է 2.0 անգամ, ընդ որում Երևանում՝ 2.3 անգամ, մարզերում՝ 38.5 %-ով:

2017 թվականի երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 6559 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2017 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 22.6 %-ով, իսկ 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ՝ 17.8 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.5 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (21.9 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե